# Արձանագրություն N 3

**Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄԱՀ–ԷԱՃԱՊՁԲ-19/01» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի մասին**

*Ք.Ապարան* *«28» Փետրվարի 2019թ.*
ժ 13:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| **Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝** | Աբրահամյան Գոռ - Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | Կարապետյան Արկադի - Համայնքի ղեկավարի տեղակալ |
| | Գալստյան Ռոբերտ – Վարչական տարածքների համակարգման և գյուղատնտեսության բաժնի պետ |
| **Գնումները համակարգող** | Միեր Ամիրյան |

1. **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում եզրակացություն չի ներկայացվել: Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը, գնահատող հանձանաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ.Բրուտյանի կողմից տրամադրված գրության 2-րդ կետը՝ էլեկտրոնային աճուրդի համակարգի խափանման պատճառով, առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել որակավորման փաստաթղթերը ներկայացնել էլ. փոստի միջոցով:

1.3 Մանակցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ** - 3 **դեմ** - 0:

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

2.1Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| <Փարվանի> ՍՊԸ | Բավարար |

**Ընդունվել է որոշում՝ կողմ** - 3, **դեմ** - 0:

3. **ԱՄԱՀ–ԷԱՃԱՊՁԲ**-19/01 **ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **ԱՄԱՀ–ԷԱՃԱՊՁԲ**-19/01 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած /ընտրված/ մանակից ճանաչել <Փարվանի> ՍՊԸ -ին:
3.2 Համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի անգործության ժամկետ չի սահմանվում:
3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և չորս աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

**Ընդունվել է որոշում կողմ** - 3, **դեմ** - 0:

4. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 9:50-ին:

**Ընդունվել է որոշում կողմ** - 3, **դեմ** - 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Աբրահամյան Գոռ

հանձնաժողովի անդամներ՝ _____ Կարապետյան Արկադի

_____ Գալստյան Ռոբերտ

Գնումները համակարգող _____ Ամիրյան Միեր